ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

30.03.23 N 29/06.3/7347-23
Ձեր N _____

«ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԱՀՐԱՄ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ
tender@theopharma.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

12.10.2022թ. կնքված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Առողջապահության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2022 թվականի հոկտեմբերի 12-ին կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/4-1» պետական գնման պայմանագիր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան (այսուհետ՝ Պայմանագիր), որից հետո ֆինանսական միջոցներ նախատեսելու նպատակով 2023 թվականի փետրվարի 13-ին Պայմանագրի շրջանակներում կնքվել է թիվ 1 համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N2 հավելվածով»:

Պայմանագրի N2 հավելվածում «Մատակարարման ժամանակացույց»-ում կատարվել է փոփոխություն՝ համաձայն Համաձայնագրի թիվ 1 հավելվածի, որով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ առաջին փուլի

ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ «Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 աշխատանքային օրերի ընթացքում»:

Սակայն Ընկերության կողմից Համաձայնագրով սահմանված ժամկետում, այն է՝ Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 աշխատանքային օրերի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո մինչև 2023 թվականի մարտի 29-ը ներառյալ Գնորդին չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ապրանքը՝ «Տուբերկուլին»:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե Վաճառողն էականորոն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում. եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Գնորդը կայացրել է որոշում՝ միակողմանի լրիվ հրաժարվել Պայմանագրից՝ համարելով այն լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մանակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ մինչև 2023 թվականի ապրիլի 6-ը ներառյալ Հավելված 3.2-ով (որակավորման ապահովում) և Հավելված 4.1-ով (պայմանագրի ապահովում) տրված տուժանքի մասին համաձայնագրերին կից ներկայացված վճարման պահանջագրերի 14-րդ կետում նշված որոկավորման ապահովումը՝ 90000800664 հաշվեհամարին, իսկ պայմանագրի ապահովումը՝ 900005000758 հաշվեհամարին և վճարման հանձնարարականները ներկայացնել Առողջապահության նախարարություն: Վերը նշված պահանջը կատարելու պարագայում Վաճառողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

30.03.2023

X

ՈՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Հասմիկ Սարգսյան,
Ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060 80 80 03 (1804)